ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՒՌՆՈՒՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-051-0202-0042 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՋՐԱԲԵՐԻ ԼԻԹՈԻԴԱՅԻՆ ՊԵՄԶԱՅԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ 1-ԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՆԻՍՏ

Գ. Նուռնուս 03.02.2025թ.

2025 թվականի փետրվարի 3-ին, ժամը 17:00-ին ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում (հասցեն՝ գյուղ Նուռնուս, Գլխավոր փողոց թիվ 15 վարչական շենք) տեղի ունեցավ «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի ներկայացրած՝ Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրում գտնվող 07-051-0202-0042 կադաստրային ծածկագրով հողամասի տարածքում Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրի օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության վերաբերյալ հանրային լսումների 1-ին փուլը:

Հանրային քննարկումների մասին հայտարարությունը փակցվել էր Նուռնուս բնակավայրում առկա ցուցատախտակին:

Մասնակցում էին՝

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Էդուարդ Մարգարյանը, ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վիգեն Ավետիսյանը, Նուռնուսի վարչական ղեկավար Աղվան Հարությունյանը, Ջրաբերի վարչական ղեկավար Բորիկ Դավթյանը, Բյուրեղավանի համայնքապետարանի «Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի» առաջատար մասնագետ Անդրանիկ Եղիազարյանը, աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետներ Լիլիթ Ծատուրյանը և Հասմիկ Սիմոնյանը, Նուռնուս և Ջրաբեր բնակավայրերի բնակիչներ (մասնակիցների ցուցակը կցվում է):

Օրակարգում՝

1. Նուռնուս բնակավայրում գտնվող 07-051-0202-0042 կադաստրային ծածկագրով հողամասի տարածքում Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրի օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության վերաբերյալ հանրային լսումների 1-ին փուլ:

Լսեցին՝

Բացման խոսքով հանդես եկավ Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավար Աղվան Հարությունյանը: Նա ներկայացրեց նիստի օրակարգը, այնուհետև խոսքը փոխանցեց «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Էդուարդ Մարգարյանին: Նա ներկայացրեց ընկերության նպատակները՝ նշելով որ, որպես ֆիզիկական անձ սեփականության իրավունքով իրեն պատկանող Նուռնուս բնակավայրում գտնվող 07-051-0202-0042 կադաստրային ծածկագրով հողամասի տարածքում, որի մակերեսը կազմում է 8 հա, մոտ 4,5 հա հողամասի վրա ցանկանում են իրականացնել օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրություն՝ հետագա շահագործման նպատակով: Բնակիչների կողմից բարձրացված հարցերին պատասխանեց նաև ընկերության ներկայացուցիչ Վիգեն Ավետիսյանը:

Ակտիվ քննարկումներ եղան Նուռնուս և Ջրաբեր բնակավայրերի բնակիչների ու ընկերության ներկայացուցիչների միջև, որի արդյունքում «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի ներկայացրած՝ Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրում գտնվող 07-051-0202-0042 կադաստրային ծածկագրով հողամասի տարածքում Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրի օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրություն կատարելու վերաբերյալ հայտը բնակիչների կողմից մերժվեց:

Քննարկումների պատասխանատու և վարող՝
Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավար՝ Ա. Հարությունյան